ԿԱՐԾԻՔ

Վարդիթեր Ջանիբեկի Մկրտչյանի «Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղիները տարրական դպրոցում» թեմայով ատենախոսության մասին ներկայացված ԺԳ. 00. 01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար:

Վարդիթեր Մկրտչյանի ատենախոսությունը նվիված է մանկավարժության կարևոր հիմնախնդիրներից մեկին՝ տարրական դպրոցում անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարությունների բացահայտմանն ու դրանց հաղթահարման ուղիների մշակմանը:

Ժամանակակից կրթության համատեքստում գերակա խնդիր է դարձել ուսուցման գործընթացում անհատական մոտեցման սկզբունքի իրականացումը՝ հաշվի առնելով սովորողների տարիքային և անհատական առանձնահատկություններն ու ուսումնական հնարավորությունները: Ակնհայտ է, որ չնայած մանկավարժների կողմից վերոնշյալ սկզբունքի իրականացման անհրաժեշտության գիտակցվածությանը, դեռևս կան բազմաթիվ դժվարություններ, խոչընդոտներ, որոնք գրեթե ուսումնասիրված և բացահայտված չեն, հետևաբար մշակված չեն նաև դրանց հաղթահարման համապատասխան ուղիները, ինչն թույլ չի տալիս սկզբունքը լիարժեքորեն իրականացնել ՀՀ տարրական դպրոցներում:

Այս առումով քննարկվող ատենախոսությունն արդիական հնչեղություն ունեցող հետազոտություն է, որն ունի գիտատեսական, մեթոդաբանական կարևոր նշանակություն: Ատենախոսության գիտատեսական արժեքը պայմանավորված է նրանով, որ անհատական մոտեցման սկզբունքի իրացման հիմնահարցերը դիտարկվում են տարրական դպրոցում սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառման, կրթական գործընթացի անհատականացման և տարբերակման հայեցակարգերի շրջանակներում՝ կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հնարավորությունների օգտագործման

տիրույթում, ինչը մանկավարժահոգեբանական, մեթոդաբանական տեսանկյուններից դեռևս խորությամբ ուսումնասիրված չէ:

Հետազոտությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Հետազոտության առաջին գլխում ներկայացված և վերլուծված են հիմնախնդրի վերաբերյալ գիտամանկավարժական մոտեցումները, հայեցակարգային դրույթները: Վեր է հանվել մանկավարժության տեսությունում առկա ուսուցման սկզբունքների դասակարգման վերաբերյալ կարևոր հիմնահարցեր. հստակեցվել են «անհատական մոտեցման սկզբունքի» և «ուսուցման անհատականացում», «ուսուցման սկզբունք» հասկացությունների էությունը, ներկայացվել է ատենախոսի կողմնորոշումն այդ հասկացությունների սահմանման վերաբերյալ:

Ատենախոսի կողմից առաջադրվել է ուսուցման սկզբունքների նոր դասակարգում՝ ըստ բնույթի և տեսակի: Բնութագրվել են դրանց առանձնահատկությունները և կիրառման ոլորտները:

Երկրորդ գլխում ներկայացվել են մանկավարժական գիտական գրականությունում առկա մոտեցումներն ու տեսակետները դաս-դասարանային համակարգում անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարությունների, խոչընդոտների վերաբերյալ, որի արդյունքում ատենախոսը հայեցակարգային մակարդակով հիմնավորվել է գործող դաս-դասարանային համակարգում անհատական մոտեցման սկզբունքի իրականացման անհնարինությունը: Այդ համատեքստում բնութագրվել է ահատական մոտեցման սկզբունքից բխող հիմնական պահանջներն ուսումնական գործընթացում և ներկայացվել են կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հնարավորությունները վերոնշյալ պահանջների իրացման շրջանակներում: Ատենախոսությունում, որպես անհատական մոտեցման սկզբունքի իրացման ուղի, հիմնավորվել է այն դրույթը, որ կոլեկտիվ ուսումնական պարապմունքներն ապահովում են անհատական մոտեցման սկզբունքից բխող հիմնական պահանջները և կարող են դիտվել որպես նշված հիմնախնդրի լուծման արդյունավետ ուղի:

Երրորդ գլխում ներկայացված են փորձարարական հետազոտության արդյունքները: Ներկայացված և բնութագրված է անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարությունների հաղթահարմանն ուղղված ուսուցման գործընթացի կազմակերպման մոդելը, դրա կառուցվածքային բաղադրիչները և առանձնահատկությունները և արդյունավետությունը հիմնավորող գործնական փաստերը: Հետազոտությունը եզրափակում է մշակված մոդելի արդյունավետության փորձարարական հիմնավորումը և արդյունքների վերլուծությունը: Արդյունքները համապատասխանում են հետազոտության տրամաբանությանը: Մշակված հարցաթերթիկներն ընդգրկուն են, հարցերին տրված պատասխանները հանգամանալից վերլուծվել և համակարգվել են ըստ իմաստային-բովանդակային դրսևորումների:

Վարդիթեր Ջանիբեկի Մկրտչյանի աշխատանքը տրամաբանորեն ավարտուն, ինքնուրույն, ամբողջական, համակարգված հետազոտություն է: Ատենախոսության տեսական վերլուծությունները, գիտական նոր սահմանումները վկայում են հեղինակի գիտելիքների ու գիտահետազոտական կարողությունների բարձր մակարդակի մասին:

Այնուհանդերձ ատենախոսությունը զերծ չէ նաև որոշ թերություններից՝

1.Ատենախոսը իր հետազոտությունում չի անդրադարձել ուսուցման գործընթացի օրինաչափություններին, որոնք սերտ փոխկապակցված են ուսուցման գործընթացի սկզբունքների հետ :

2. Աշխատանքում չեն ներկայացված ուսուցման նորարարական սկզբունքները:

3. Ատենախոսությունում տեղ են գտել վրիպակներ, հղումները տարբերվում են միմյանցից. Ներածությանում, թեմայի արդիականության հիմնավորման մեջ առկա է մեկ էջում (էջ 2) 30 հղում

4. Ցանկալի կլիներ, եթե ատենախոսը առանձին-առանձին բնութագրեր իր կողմից մշակված մոդելի կառուցվածքային բաղադրիչները:

5. Եզրակացությունները լիովին չեն արտացոլում տեսական և փորձարարական հետազոտության արդյունքները:

Չնայած նշված թերությունների, ատենախոս Վարդիթեր Զանիբեկի Մկրտչյանի «Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղիները տարրական դպրոցում» խորագրով ատենախոսությունը ավարտուն և ինքնուրույն գիտական հետազոտություն է, որը համապատասխանում է մանկավարժական գիտություն թեկնածուի գիտական աստիճանին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, և ատենախոսը արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճանի՝ ԺԳ.00.01.,Մանկավարժության տեսություն և պատմություններ մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝

մանկավարժական գիտությունների թեկնածու,

դոցենտ **Ա.Լ. Մինասյան**

Մասնագետի (Մինասյան Աննա Լևոնի) ստորագրության իսկությունը հաստատում եմ.

Երևանի Վ.Բրյուսովի անվ. պետական համալսարանի
գիտական քարտուղար՝ **Հ.Հ.Փիլավջյան**